ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«15» փետրվար 2022 թ.

ՀՀ Սյունիքի մարզպետարան,

այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս *գլխավոր քարտուղար Է. Մարտիրոսյանի*, մի կողմից և «Գործընթաց» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս տնօրեն Ինարա Դանիելյանի, մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Համաձայն սույն պայմանագրի՝ Կատարողը պարտավորվում է «Գործընթաց» ՍՊԸ խմբագրության կողմից իրականացնել «Գործընթաց» թերթի բաժանորդագրություն, այսուհետ՝ «Ծառայություն», իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայության դիմաց:
2. Ծառայության կատարման ժամկետն է՝--------- մինչև 31.12.22 թ.-ը:
3. Կատարողը պարտավոր է ապահովել ծառայության պատշաճ կատարումը, հետևել ծառայության ընթացքին:
4. Սույն պայմանագրի գործողության ողջ ժամկետի համար Կատարողը պարտավոր է Պատվիրատուին պատվիրված ծրարով կամ անմիջականորեն ներկայացնել բաժանորդագրության քարտ, այլ փաստաթղթեր անհրաժեշտ վճարում կատարելու համար:
5. Պատվիրատուն պարտավոր է Կատարողին հաղորդել ճշգրիտ տեղեկություններ իր հասցեի, բաժանորդագրության ժամկետի և թերթերի քանակության մասին, առնվազն 5/հինգ/ օր առաջ տեղյակ պահել հասցեի փոփոխության մասին:
6. Պատվիրատուն պարտավոր է անպատշաճ որակի, ոչ ճշգրիտ քանակի, ոչ հերթական համարի կամ թերթի հրապարակման ամսաթվից անժամանակ ուշացված թերթի ստացման դեպքում հեռախոսով (Հեռ.՝091767391) ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրում կամ գրավոր (ստորագրությամբ)՝ ոչ ուշ, քան 7 աշխատանքային օրում այդ մասին տեղյակ պահել «Գործընթաց» ՍՊԸ-ի խմբագրությանը:
7. Ծառայության արժեքը կազմում է՝ *2880 /երկու հազար ութ հարյուր ութսուն/* դրամ:
8. Ծառայության դիմաց վճարումը կատարվում է փոխանցումով կամ կանխիկ, իսկ նախորդ տարվանից (-ներից) պարտքի առկայության դեպքում, այն պետք է վճարվի ոչ ուշ, քան 30.04.20 - թ.-ը:
9. Սույն պայմանագրով վճարային պարտավորությունները սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում Կատարողն իրավունք ունի Պատվիրատուից պահանջել տույժ՝ վերջինիս կողմից չվճարված գումարի 1(մեկ) տոկոսի չափով՝ յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար:
10. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կողմերը կրում են պատասխանատվություն հասցված իրական վնասի չափով:
11. Պայմանագրից բխող վեճերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
12. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Կատարող	Պատվիրատու
«Գործընթաց» ՍՊԸ	*ՀՀ Սյունիքի մարզպետարան*
Լրատվական գործունեություն իրականացնող	
Հասցեն՝ ք.Երևան, Ավան, Թումանյան թաղ.7/2-24	Հասցե *ՀՀ, Սյունիքի մ., ք. Կապան*
Հեռ. /010/613440, /091/767391	*Գ. Նժդեհի 1*
էլ. փոստ՝ gortsntats@yandex.ru	
gorcntac@gorcntac.am	ՀՎՀՀ *09415375*
ՀՎՀՀ 00650414	Հ/հ *900311080049 Երևանի թիվ 1 ԳԲ*
Հ/հ 16042015341500	
«ՎՏԲ-Հայաստան» բանկի խորհրդ.մ-ճյուղ	*գլխավոր քարտուղար Է. Մարտիրոսյան*
Տնօրեն՝ Ինարա Դանիելյան	
Կ.Տ	Կ.Տ.